

**ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ IRZ-Ի ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՊԱԼԱՏԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ-ՔՆՆԱՐԿՈՒՄ**

05.12.2018 13:51

**Վերապատրաստման դասընթաց - քննարկում**  
**13 դեկտեմբերի 2018թ.**

**Հարգելի՛ փաստաբաններ,**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) և Գերմանիայի փաստաբանների դաշնային պալատի հետ համատեղ կազմակերպում է փաստաբանների վերապատրաստման դասընթաց-քննարկում՝ **«Փաստաբանների պալատների կողմից լրատվամիջոցների և հանրության հետ տարվող աշխատանքները»** թեմայով:

Վերապատրաստման դասընթացի շրջանակներում գեկույցներով հանդես են գալու **գերմանացի փորձագետներ**՝ Գերմանիայի դաշնային փաստաբանների պալատի հասարակության հետ կապերի գծով գործադիր տնօրեն-մամուլի խոսնակ, **փաստաբան Շտեֆանի Բեյրիխը** և Գերմանիայի Թյուրինգիա քաղաքի փաստաբանների պալատի նախագահ, Գերմանիայի դաշնային փաստաբանների պալատի մամուլի և հանրության հետ աշխատանքի հանձնաժողովի անդամ, **փաստաբան Յան Հելգե Բեսսելը**, ինչպես նաև **ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանը**:

**Վերապատրաստման դասընթացի շրջանակներում հյուրընկալելու ենք նաև Գերմանիայի փաստաբանների դաշնային պալատի գործադիր տնօրեն, փաստաբան՝ դոկտոր Վերոնիկա Հոռերին:**

**Դասընթացը տեղի է ունենալու 2018թ. դեկտեմբերի 13-ին, ժամը 10:00-ից 17:00-ն՝ ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքի 4-րդ հարկի մեծ դահլիճում:**

Դասընթացն անցկացվելու է հայերեն և գերմաներեն լեզուներով՝ համաժամանակյա թարգմանությամբ:

**Դասընթացին մասնակցությունը յուրաքանչյուր փաստաբանի համար կհաշվարկվի 8 (ութ) ակադեմիական ժամ վերապատրաստում: Դասընթացին նախապես գրանցված մասնակիցներին դասընթացի ավարտին կտրվի մասնակցության վկայական:**

Դասընթացին կարող են մասնակցել **ոչ ավել, քան 25 (քսանհինգ) փաստաբան:** Նախապատվությունը կտրվի դասընթացին ավելի վաղ գրանցված փաստաբաններին: Դասընթացին գրանցվելու համար կարող եք էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկել **ani.gharibyan@advocates.am էլ. հասցեին**՝ նշելով Ձեր արտոնագրի համարը և հեռախոսահամարը:

**ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ ԳՐԱՆՑՎԵԼ, ԵՔԵ ՎՍՏԱՀ ԵՔ, ՈՐ ԿԱՐՈՂ ԵՔ ԴՐԱՆ ԺԱՄԱՅԻՆ ԱՌՈՒՄՈՎ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԱՄԲՈՂՋ ԾԱՎԱԼՈՎ:**

**Առդիր՝ դասընթացի օրակարգը**

**Առաջարկվող նորություններ**





**21.01.2016** ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ  
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է  
ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ՓՈՐՁԻ  
ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ



**05.09.2016**  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ՝ ՇԻՐԱԿԻ  
ՄԱՐՁԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ  
ՀԱՄԱՐ



**05.09.2016**  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ՝ ԼՈՌՈՒ ՄԱՐՁԻ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ



**05.09.2016**  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ՝ ՏԱՎՈՒՇԻ  
ՄԱՐՁԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ  
ՀԱՄԱՐ

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb\_comments\_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb\_comments\_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })